ԱՄՆ Աշխատանքի նախարարություն

Եզրակացություններ 2023 թ. մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերաբերյալ

Հայաստան

2023 թվականին Հայաստանը մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման ուղղությամբ նվազագույն առաջընթաց է արձանագրել: Կառավարությունն ընդունել է փոփոխված Աշխատանքային օրենսգիրքը՝ ներառելով մանկական աշխատանքի վերաբերյալ այնպիսի դրույթները, որոնք այժմ ամբողջությամբ ընդգրկում և պաշտպանում են բոլոր երեխաներին՝ այդ թվում, ոչ ֆորմալ/ոչ ավանդական հատվածում աշխատողներին: Բացի այդ, օրենսգիրքը միջազգային չափանիշներին է համապատասխանեցրել աշխատելու նվազագույն տարիքի օրենսդրական պահանջը: Ավելին, իրավապահ մարմինները, ինչպիսիք են Ազգային ոստիկանությունը, Քննչական կոմիտեն և Գլխավոր դատախազությունը ընդունել և սկսել են կիրառել՝ տրավմայի վերաբերյալ իրազեկումը և զոհակենտրոն մոտեցումներն ապահովող մի շարք ուղեցույցներ, մարդկային թրաֆիքինգի կամ շահագործման բոլոր զոհերի, այդ թվում՝ երեխաների հետ իրենց աշխատանքում: Ի լրումն, կառավարությունն ընդունել է Մարդկային թրաֆիքինգի վերաբերյալ 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը, որտեղ մի առանձին գլուխ նվիրված է մանկական թրաֆիքինգին և մանկական շահագործման կանխարգելմանը: Այնուամենայնիվ, չնայած մանկական աշխատանքին անդրադառնալու նոր նախաձեռնություններին, Հայաստանը միայն նվազագույն առաջընթաց է գրանցել, քանի որ աշխատանքային տեսուչները չունեն չհայտարարված ստուգումներ անցկացնելու լիարժեք լիազորություն, ինչը կարող է չբացահայտված թողնել աշխատավայրերում՝ մանկական աշխատանքին վեբերող օրենսդրության հնարավոր խախտումները և այլ աշխատանքային չարաշահումները: Բացի այդ, քանի որ աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիքը սահմանված է 16 տարեկանում, որն ավելի ցածր է պարտադիր կրթության 18 տարեկան տարիքից, երեխաները կարող են դրդվել դպրոցը թողնելու մինչև պարտադիր կրթության ավարտը: Բացի այդ, կառավարությունը մանկական աշխատանքի տարածվածության վերաբերյալ պաշտոնական տվյալներ կանոնավոր կերպով չի հավաքում կամ համակարգում: Ավելին, կառավարությունը չունի համակարգման մեխանիզմներ և քաղաքականություն՝ պայքարելու մանկական աշխատանքի բոլոր վատթարագույն ձևերի դեմ, այդ թվում՝ գյուղատնտեսության, ծառայությունների ու ոչ ֆորմալ/ոչ ավանդական աշխատանքի այլ ձևերը:

Ստորև առաջարկած գործառությունները կառավարությանը կօգնեն վերացնելու այն բացթողումները, որ Միացյալ Նահանգների Աշխատանքի նախարարությունը (USDOL) հայտնաբերել է ՝ մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու՝ Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման հարցում:

Ոլորտ	Առաջարկվող գործողություն
Իրավական շրջանակ	Աշխատանքի ընդունման նվազագույն տարիքը 16-ից բարձրացնել 18-ի, որպեսզի համապատասխանի պարտադիր կրթության տարիքին:

Ոլորտ	Առաջարկվող գործողություն
	Ապահովել Հայաստանի օրենսդրությամբ 14-15 տարեկան երեխաների համար ընդունելի թեթև աշխատանքի տեսակների սահմանումը:
Գործադրում	Ամրապնդել տեսչական համակարգը՝ թույլ տալով չհայտարարված ստուգումներ:
	Աշխատանքային տեսուչներին աշխատավայրերում ստուգումներ իրականացնելու լիազորությունով օժտել՝ ներառյալ աշխատանքային ժամերից հետո, ինչպես նաև տնօրենի կամ տնօրենի պաշտոնակատարի բացակայության ժամանակ աշխատավայր մուտք գործելու լիարժեք լիազորությունը:
	Պաշտպանել երեխաներին՝ իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրելով մանկական թրաֆիքինգի զոհերի հետ հարցազրույց անցկացնելու հմտության մասնագիտացված ուսումնավարժանք:
	Իրավապահ մարմինների հետ համագործակցող մանկական թրաֆիքինգի զոհերին պաշտպանելու նպատակով կիրառել վկաների պաշտպանության գործող մեխանիզմները:
	Ապահովել, որ իրավապահ մարմինների աշխատակիցները հասկանան իրենց պաշտոնեական պարտականությունները, և որ Քննչական կոմիտեն պատշաճ պատրաստվածություն ստանա մարդկային թրաֆիքինգի զոհերի նույնականացման և հետաքննության աշխատանքներում:
Համակարգում	Համակարգման մեխանիզմներ ստեղծել տնտեսության բոլոր ոլորտներում մանկական աշխատանքի բոլոր վատթարագույն ձևերի դեմ պայքարի համար, ներառյալ փողոցային աշխատանքը, ծառայություններն ու գյուղատնտեսությունը:
Կառավարության քաղաքականություն	Մանկական աշխատանքի բոլոր ձևերի դեմ պայքարի քաղաքականություն որդեգրել, այդ թվում՝ գյուղատնտեսության, ծառայությունների, և ոչ ֆորմալ/ոչ ավանդական այլ աշխատանքների ոլորտներում:
Սոցիալական ծրագրեր	Քաղաքականության ու ծրագրերի իրագեկման նպատակով, հավաքել և հրապարակել՝ մանկական աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ տվյալներ, այդ թվում, գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում:
	Ապահովել, որ բոլոր երեխաները, ներառյալ աղջիկներն ու հեռավոր շրջաններում բնակվող երեխաները, ցածր եկամուտ ունեցող ու սեզոնային աշխատանքի համար ճանապարհորդող ընտանիքների երեխաներն ու էթնիկական փոքրամասնության խմբերի երեխաներն ունենան կրթության հավասար հասանելիություն:

Ոլորտ	Առաջարկվող գործողություն
	Շարունակել առկա ջանքերը՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղից փախստական երեխաների սոցիալական պաշտպանության բոլոր համակարգերի շարունակական հասանելիությունը՝ մեղմելու նրանց խոցելիությունը մարդկային թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման նկատմամբ:
	Ապահովել փոքրամասնությունների լեզուների բավարար թվով որակյալ ուսուցիչների առկայությունը՝ էթնիկական փոքրամասնությունների խմբերի բոլոր երեխաների կրթական կարիքները հոգալու համար:
	Ապահովել հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար սովորական կրթության հասանելիությունը՝ բարելավելով ֆիզիկական ենթակառուցվածքի մատչելիությունն ու հոգեկան խանգարում ունեցող աշակերտների համար հատուկ ուսուցիչների և այլ մասնագետների առկայությունը:
	Ամրապնդել կրթական համակարգում դասից անհարկի բացակայող երեխաներին բացահայտելու միջոցառումները, և կիրառել դպրոց հաճախելու պարտադիր պահանջները՝ ապահովելու համար, որ երեխաները չներգրավվեն մանկական աշխատանքներում:
	Հաստատություններում չընդգրկված երեխաների համար ապահովել արտախնամ ծառայությունների հասանելիությունը և շարունակել կանխարգելիչ ջանքերն ու ուժեղացնել աջակցությունը ներկայումս պետական հաստատություններում գտնվող երեխաների համար՝ կանխելու նրանց ներգրավումը մանկական աշխատանքներում:
	Փողոցային աշխատանքում ու գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունեցող մանկական աշխատանքի խնդիրներին անդրադարձող ծրագրեր հիմնել:
	Բավարար անձնակազմ ու ռեսուրսներ հատկացնել երկրով մեկ սոցիալական ծառայություններ տրամադրելու և դրանց մասին հանրությանը տեղեկացնելու նպատակով, ծառայություններ մատակարարողներին բավարար վերապատրաստում առաջարկել և նրանց աշխատանքային ողջամիտ ծանրաբեռնվածություն հանձնարարել: